

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2016թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. Կարևորագույն արդյունքները

«Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Բայադյան) թեմայի շրջանակներում առաջարկվել է.

- տարբեր ճյուղերում ներդրումային ծրագրերի խթանում, բյուջետային բոլոր ծախսերի կրճատում, հարկային վարչարարության բարեփոխում, փոքր ու միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագրերի ընդլայնում՝ ապահովելով մրցակցությունը,
- ապահովել կազմակերպությունների մրցունակության համակողմանի քանակական գնահատման միասնական մեթոդիկայի կիրառումը, որի կարիքը ունեն հայրենական բոլոր կազմակերպությունները:

«Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները» (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Թավադյան) թեմայի շրջանակներում հիմնավորվել է, որ

- անհրաժեշտ է ձևավորել ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդել, որը հաշվի կառնի ՀՀ տնտեսության ներքին ու արտաքին մարտահրավերները, կանխատեսելով ակնկալվող արդյունքները,
- եզրակացվել է, որ Հայաստանի համար ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործման հանձնարարականները պետք է հաշվի առնվեն նաև երկրի տնտեսական անվտանգության խնդիրները,
- Հայաստանը առևտրատնտեսական արդյունավետ հարաբերություններ զարգացնելու զգալի ներուժ ունի ինչպես հարևան երկրների՝ Վրաստանի և Իրանի հետ, այնպես էլ ԵՄ անդամ մի շարք պետությունների հետ:

«Հարկաբյուջեդային քաղաքականության բարելավման արդի հիմնախնդիրները ՀՀ -ում» (ղեկ.՝ տնտ.թեկն. Կ.Սարգսյան) թեմայի շրջանակներում.

- ՀՀ-ում գործարար միջավայրի ակտիվացման, տնտեսական աճի խթանման և սոցիալական լարվածության թուլացման տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունի հարկային բեռի կրճատումը և միաժամանակ հարկման բազայի ընդլայնումը, ինչը թույլ կտա Հայաստանի հարկային համակարգն ավելի արդյունավետ դարձնել: Որպես հարկային ոլորտի բարեփոխումներ՝ առաջարկվել է.
- ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափերի կիրառումը՝ մասնավորապես կենսական նշանակության ապրանքների և ծառայությունների համար կիրառելով ԱԱՀ-ի նվազեցված դրույքաչափի սահմանումը,
- շահութահարկի գծով արագացված ամորտիզացիայի կիրառումը,
- կազմակերպության հարկվող շահույթի նվազեցումն այն գումարի չափով, որն ուղղվելու է ներդրումների ֆինանսավորմանը,
- կազմակերպության շահույթից նվազեցվող ծախսերի առավելագույն նորմաների վերանայումը,

- ֆիզիկական անձանց հարկային բեռի կրճատումը:

II. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

1) «Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Բայադյան) թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է.

- տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությունը, դրանց ֆինանսական արդյունքների և դրանից բխող շահութաբերության ցուցանիշները, ֆինանսական կայունության գնահատումը, ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման հնարավոր ուղիները, վերամշակող կազմակերպությունների և արտադրողների միջև պայմանագրային հարաբերությունների զարգացումը, ֆինանսական ռեսուրսների մատչելիության բարելավումը, արտադրական կազմակերպությունների ռիսկերի վերլուծությունը և ռիսկերի նվազեցման եղանակներն ու ուղիները: Կատարված վերլուծություններով արդյունքում առաջարկվել է.
- բարձրացնել իրացումից ստացած զուտ հասույթի չափը համախառն ներքին արդյունքի կազմում, որը հնարավորություն կտա նպաստելու ավելի շահութաբեր արտադրատեսակների ծավալների ընդլայնմանը,
- ագրովերամշակման ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներից են՝ մատչելի վարկերի ներգրավումը:

2) «Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման արդի հիմնախնդիրները ՀՀ -ում» (ղեկ.՝ տնտ.թեկն. Կ.Սարգսյան) թեմայի շրջանակներում.

- հետազոտվել և վերլուծվել են հարկաբյուջետային քաղաքականության տեսամեթոդական հիմքերը,
- վերլուծվել են հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, ինչի արդյունքում և բացահայտվել են ոլորտում առկա հիմնախնդիրները,
- ուսումնասիրվել է հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում արտերկրյա փորձը և իրականացվել են համեմատական վերլուծություններ,
- առաջարկվել են հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման յուրովի մոտեցումներ:

3) «Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները» (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Թավադյան) թեմայի շրջանակներում.

- բացահայտվել են ՀՀ տնտեսության արտաքին և ներքին մարտահրավերները: Որպես արտաքին մարտահրավերներ են մատնանշվել տարածաշրջանում ոչ կայուն իրավիճակը, Ռուսաստանում գնողունակության անկումը, ԵԱՏՄ-ում մակրոտնտեսական քաղաքականության չհամաձայնեցվածությունը, ինչպես նաև՝ համաշխարհային շուկայում գումավոր մետաղների գների անկումը, իսկ ներքին մարտահրավերները պայմանավորված են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ բավարար համաձայնեցմամբ և կոռուպցիայի բարձր մակարդակով:

ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործման ուղիների բացահայտման նպատակով հետազոտվել են այդ ներուժի իրացման խոչընդոտներն ու հեռանկար-

ներն՝ ըստ ինտեգրացիոն համագործակցության զարգացման այն ուղղությունների, որոնք առաջարկվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն Խորհրդի կողմից: Փորձ է կատարվել որոնել ուղիներ՝ ՀՀ տնտեսության զարգացման բոլոր իրատեսական ու անիրատեսական հեռանկարների հանգույցները Եվրասիական տնտեսական տիրույթում շաղկապելու համար:

Ուսումնասիրվել են Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի այլընտրանքային ուղղությունները՝ մասնավորապես հայ-իրանական և ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության զարգացման հեռանկարները: Վերլուծվել են հայ-իրանական ներդրումների դինամիկան և կառուցվածքը:

4) «Հայ-իրանական տնտեսական հարաբերությունների հեռանկարներն ու ուղղությունները ժամանակակից աշխարհաքաղաքական պայմաններում» (ղեկ.՝ ղեկ. տնտ. թեկն. Հ. Մարկոսյան)

Առկա հնարավորությունների և գործարկված ծրագրերի տեսանկյունից կարևոր ենք համարում հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. Տարածաշրջանային տրանսպորտային ցանցի մաս կազմելու նպատակով ֆինանսական ռեսուրսների կոնսոլիդացմամբ ավարտին հասցնել հյուսիս-հարավ ավտոմայրուղու շինարարությունը՝ որից հետո միայն անցնել երկաթգծի կառուցման նպատակահարմարության քննարկմանն ու իրականացմանը, քանզի նման մասշտաբային նախագծերի միաժամանակյա իրականացումը կարող է վտանգել դրանց իրագործելիությունը:
2. ԵՏՄ տարածք վերամշակված գյուղմթերքի անխափան մատակարարում իրականացնելու, հայրենական վերամշակող արդյունաբերության սեզոնային ծանրաբեռնվածության հարթեցման նպատակով կազմակերպել իրանական ծագմամբ գյուղմթերքի ներկրման, վերամշակման և արտահանման աջակցության մեխանիզմներ:
3. Վերջին տարիներին արագընթաց զարգացում ապրող այլընտրանքային էներգիայի օգտագործման, ժամային ծանրաբեռնվածության համահարթեցման, եղանակային և բնակլիմայական գործոններով պայմանավորված էներգիայի գերարտադրության և պակասորդի հաղթահարման նպատակով մշակել և ներդնել էներգիայի փոխադարձ մատակարարումների և փոխհաշվարկների մեխանիզմներ:
4. Զբոսաշրջության խթանման նպատակով, մի շարք զբոսաշրջային երկրների օրինակով, թույլատրել առևտրի և սպասարկման կետերում արտարժույթով վճարումներ կատարելու հնարավորությունը, ինչը կխթանի ոչ միայն իրանցի, այլև այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների կողմից ավելի շատ գնումներ կատարելուն:

5) «ՀՀ վերամշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման և ներդրումային գործունեության արդի հիմնախնդիրները ԵԱՏՄ ինտեգրացման համապտեքստում» (ղեկ.՝ ղեկ. տնտ. թեկն. Ք. Բաղդասարյան) թեմայի շրջանակներում բացահայտվել է, որ

1. Լեռնային Ղարաբաղի շարունակվող հակամարտության հետևանքով իր չորս սահմաններից երկուսի (Թուրքիայի և Ադրբեջանի հետ) փակումը, բերում են ՕՌԻՆ-երի կրճատման,

2. քաղաքական սահմանափակումները օտարերկրյա շուկայի ծավալի ցուցանիշով երկիրը 144-րդ երկրների շարքում ինքնըստինքյան զետեղում են Մրցունակության համաշխարհային 2014-2015 ցուցիչի 126-րդ տեղում և հանգեցնում են բարձր տրանսպորտային ծախսերի, ինչը կարող է ճնշել արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների մասով Հայաստանի ակնկալիքները,
3. ԵՏՄ երկրների միջև ՕՈւՆ-ների համար գնալով ավելացմամբ մրցակցությունը, որը ենթադրում է այն, որ ընդունող երկրները պետք է իրականացնեն ՕՈւՆ ներգրավելու ամենաարդյունավետ ռազմավարությունները՝ միաժամանակ ապահովելով և առավելագույնի հասցնելով դրա ներդրումը երկրի զարգացման նպատակների կենսագործման հարցում,

6) «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները» (ղեկ.՝ ղեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ. Վ.Հարությունյան) թեմայի շրջանակներում թեմայի շրջանակներում ներկայացվել են Բուրսայի և Ադանայի նահանգներում բնակվող հայերի սեփականության, ինչպես նաև եկեղեցու տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի նկարագիրը նախքան 1915 թ., ինչպես նաև կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին: Բուրսայի նահանգի դեպքում ներկայացվել է շերամաբուծության և թեթև արդյունաբերության մեջ հայ գործարարների դերը, Ադանայի և Բուրսայի նահանգի պարագայում՝ հանքերի մասին տեղեկատվություն: Տրվել է Ադանայի նահանգները՝ որպես հարևան նահանգների համար արտագնա աշխատանքի վայր (150,000) և վերջիններիս զբաղվածության հնարավորությունները տարբեր ոլորտներում: Բուրսայի նահանգի դեպքում ներկայացվել է տարբեր եկեղեցիների ունեցվածքի և/կամ անշարժ գույքի նկարագիրը, որը հնարավորություն է տալիս ստանալու միջին եկեղեցու սեփականության տակ գտնվող գույքի նկարագիրը: Ադանայի և Բուրսայի նահանգներում ներկայացվել է հայերի զբաղվածության նկարագիրը, ըստ տնտեսության ոլորտների, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերում առանձին ձեռնարկությունների և վերջիններիս կողմից արտադրված ապրանքների սպառման շուկաների նկարագիրը: Ադանայի նահանգում նշվել է նահանգում որոշ բնակավայրերում բնակվող հայերի ունեցվածքի վերականգնման համար անհրաժեշտ գումարի չափը՝ 700,000 Օսմանյան կայսրության ոսկի (1918թ. գներով կամ 39.5 մլն. ԱՄՆ դոլար 2016թ. գներով):

7) «Միգրացիոն գործընթացների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» (ղեկ.՝ ղեկ. տնտ.թեկն. Ա.Զատիկյան) թեմայի շրջանակներում ներկայացվել են ինչպես ՀՀ-ի միգրացիոն տեղաշարժերի ներկայիս վիճակը, երկիր օտարերկրյա աշխատուժի ներգրավման հետ կապված խնդիրները: Առանձնացվել են այն գործոնները, որոնք նպաստում և զսպում են աշխատանքային միգրացիան: Ցույց է տրվել, որ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները լրջորեն ազդում են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Նշվել է միգրանտների դրամական փոխանցումների դերի աճը ՀՀ տնտեսության զարգացման գործընթացում որպես կապիտալի նոր աղբյուր, դրանց տարբերությունները ֆինանսական այլ հոսքերից, ինչպես նաև

ներկայացվել է արտասահմանյան երկրների փորձը դրամական եկամուտների ներդրումների փոխանակման գործում:

Թեմայի շրջանակում բացահայտվել են նաև ընկերությունների ներդրումային գործունեության խթանման միջոցով տնտեսության զարգացման հնարավորությունները, ուսումնասիրվել են գործազրկության մակարդակի կրճատման, նոր աշխատատեղերի ստեղծման, կենսամակարդակի բարձրացման և տնտեսության համաչափ զարգացման ապահովման հիմնախնդիրները:

Ներկայացվել է տարբեր երկրների աշխատանքային միգրացիայի կարգավորման փորձը, ինչպես նաև նշվել է ՀՀ պետական միգրացիոն քաղաքականության առաջնահերթությունները, մասնավորապես, ՀՀ-ից երիտասարդ կադրերի արտահոսքի կրճատման նպատակով:

8) «Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր. գիտական հետազոտություն» (ղեկ.՝ տ.գ.դ. Ռ.Սարինյան) թեմայի շրջանակներում ուսումնասիրությունների արդյունքներն իրացվել են հետևյալ հրապարակումներում.

Մենագրություններ

- Վ.Հարությունյան, Ռ.Սարինյան, Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016թթ. (հետազոտական արդյունքների ուրվագիծ), «Գիտություն» հրատ., 2016, 223 էջ:

Աշխատությունն ուրվագծում է տնտեսագիտության ինստիտուտի տասնամյա (2006-2016թթ.) հետազոտական գործունեության հետազոտությունը: Նյութը ենթարկելով որոշակի թեմատիկ համակարգման (տնտեսական ճգնաժամեր, հարկային տնտեսագիտություն, գիտություն և տնտեսական աճ, միջազգային տնտեսագիտություն, կառավարչական միտք, տնտեսության իրական հատված, տնտեսագիտական մտքի պատմություն) կատարվել են վերլուծություններ դրանց դիտակետերի և կիրառական տեսանկյունների վերաբերյալ:

- Հրատարակության է պատրաստվում Ավետիք Արասխանյանը և իր «Մուրճը» մենագրությունը (Ռ.Սարինյան, Ա.Թադևոսյան):

Վերսկսվել են «Հայ տնտեսագետներ» գրքի նոր նյութերի հավաքումը հայ տնտեսագիտական մտքի պատմության առանձին շրջանների վերաբերյալ մենագրության լրամշակված հրատարակության աշխատանքները, ինչպես նաև հրատարակության է պատրաստվում «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը» (գիտակենսագրական հանրագիտարան) խորագրով գրքի I մասը:

III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

Թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական հետազոտություն չենք ունեցել:

IV. Կիրառական մշակումների արդյունքները.

«Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Բայադյան) թեմայում.

- Ուսումնասիրվել, վերլուծվել և հիմնավորվել է «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ օրինակով գյուղատնտեսական արտադրանք (մթերք) արտադրող սուբյեկտների և վերամշակող արտադրական կազմակերպությունների միջև կնքված ու գործող պայմանագրերի նպատակահարմարությունը՝ առաջարկվել է ՀՀ կառավարության կողմից արտադրողներին սուբսիդավորման իրականացում՝ շուկայական գնի և նվազագույն սահմանված գնի միջև եղած տարբերության չափով,

- արտադրական ռիսկերի կառավարման նվազեցման համար առաջարկվել է ստեղծել համաֆինանսավորման սկզբունքով ապահովագրության նոր համակարգի արագ ձևավորում, որին հետագայում կնպաստի միջհամայնքային միավորումների նոր համակարգի ստեղծումը:

«Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները» (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Թավադյան) թեմայի շրջանակներում.

- ՀՀ ինտեգրացիոն էֆեկտները գնահատելու համար առաջարկվել է ստեղծել բազմաչափ ռեգրեսիոն մոդել այդ համատեքստում, մասնավորապես ուսումնասիրվել է ՀՆԱ-ի վրա ինտեգրացիոն գործընթացները պայմանավորող փոփոխականների ազդեցությունը:

- Առաջարկվել է էապես կրճատել վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերությունը մինչև ավելի, քան 2-3 տոկոսային կետով:

- Հիմնավորվել է, որ էներգետիկ գլոբալ շուկայի արդի զարգացումներին համահունչ Հայաստանի նման երկիրը, որը զգալիորեն կախված է էներգակիրների ներկրումից պետք է աստիճանական անցում կատարի էներգիայի այլընտրանքային (վերականգնվող) աղբյուրների օգտագործմանը:

Վ. Ինստիտուտի գիտաշխատողների կողմից 2016թ. հրատարակված մենագրություններն ու համահեղինակությամբ գրքերը

Մենագրություններ

Մենագրություններ հրատարակված 2016թ.

1. Բաղդասարյան Ք.Յու., Ներդրումային ծրագրերի իրականացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 183 էջ:

2. Բայադյան Ա.Հ., Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում, Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 184 էջ:

3. Հարությունյան Վ.Լ., Սարինյան Ռ.Ն., Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում (2006-2016թթ.) հետազոտության արդյունքների ուրվագիծ, Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 224 էջ:

4. Հարությունյան Տ.Վ., Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 320 էջ:

5. Նավոյան Է., Հայկական հարցը միջազգային խորհրդաժողովներում և պայմանագրերում (1878-1923թթ.), (պատմական, իրավական և տնտեսական վերլուծություն), Եր.: «Գիտություն» հրատ., 2015, -166 էջ

6. Սարգսյան Կ.Ս., Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 416 էջ:

7. Սարինյան Ռ.Ն., Թադևոսյան Ա.Ս., Ավետիք Արասխանյանը և իր «Մուրճը», Եր.: «Ճարտարագետ» հրատ., 2016, -204 էջ

8. Հաշվետվություն, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի 2006-2016թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին: Եր.: «Գիտություն» հրատ., 2016, -374 էջ

Գիտական հոդվածներ հրատարակված 2016թթ.

«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ.հոդվածների ժողովածու - 2016

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ, Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 472 էջ

1. Ազատյան Լ.Ս., Ալոյան Ռ.Ս., Գիտատեխնիկական տեղեկատվության իրականացման դերը արտադրության կայունացման ու զարգացման գործում, էջ 415-420

2. Ամիրխանյան Վ.Ա., Հետխորհրդային պետություններում գիտելիքահենք տնտեսության զարգացման համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Բելառուս, Էստոնիա, էջ 199-207

3. Այանյան Ա.Հ., Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ փոփոխուն ծախսերի վերլուծությունը, էջ 21-28

4. Անդրեասյան Ն.Հ., Ֆինանսական ռիսկերի կառավարման բազելյան սկզբունքների կիրառման հիմնախնդիրները, էջ 28-33

5. Բաղդասարյան Ք.Յ., Սովետային տնտեսության գնահատման մեթոդները և դրանց տեղայնացման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, էջ 425-432

6. Բաղդասարյան Ք.Յ., Հակոբյան Ե.Ա., Սովետային տնտեսության տեսական հարցերի շուրջ, էջ 420-425

7. Բայադյան Ա.Հ., Բայադյան Ա.Ա., ՀՀ-ում ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի ժամանակագրական փոփոխություններն ու կարգավորման ուղիները, էջ 221-228

8. Բայադյան Ա.Հ., Կոստանյան Շ.Մ., ՀՀ ագրովերամշակող արդյունաբերության մթերքների արտադրության բարելավումը որպես դրանց արտահանման ծավալների ավելացման կարևորագույն նախապայման, էջ 228-234

9. Գրիգորյան Ա.Ս., Ներդրումների տնտեսական բովանդակությունը և բնութագրիչները, էջ 68-74

10. Դրամբյան Ա.Գ., ՀՀ արտահանման վրա ազդող հարկային արտոնությունների հարցի շուրջ, էջ 87-93

11. Զաքարյան Ա.Ե., Առաքելյան Կ.Հ., ՀՀ արդյունաբերական կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռման հիմնախնդիրները, էջ 93-99

12. Թավադյան Ա.Ա., ՀՀ տնտեսության արտաքին ու ներքին մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները, էջ 239-244

13. Խաչատրյան Ն.Կ., ՀՀ հարկային օրենսգրքի անհրաժեշտությունն ու խնդիրները հարկային բարեփոխումների համատեքստում, էջ 99-104

14. Կեովտերեյան Բ.Կ., Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնախնդիրները, էջ 250-254

15. Հարությունյան Ա.Վ., ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող վարկային ներդրումների փոխկապվածությունների վերլուծությունն ըստ օգտագործման պատկանելիության, էջ 124-131

16. Հարությունյան Գ.Է., ՀՀ տնտեսական ներուժի իրացման հնարավորությունները ԵԱՏՄ շրջանակներում. խոչընդոտներ և հեռանկարներ, էջ 254-260

17. Հարությունյան Գ.Է., Ինտեգրացիա. աշխարհաքաղաքական տեսանկյուն, էջ 438-443

18. Հարությունյան Դ.Վ., Ընթացիկ հաշվի պետական կարգավորման հիմնախնդիրները էջ 138-143

19. Հարությունյան Հ.Հ., Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ Լոռու մարզում, էջ 260-265

20. Հարությունյան Վ.Լ., ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 10 ամյա (2006-2016թթ.) գիտական հետազոծը, էջ 17-21

21. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Դ.Վ., Տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները և վճարային հաշվեկշռի պետական կարգավորման բարելավման հեռանկարները, էջ 131-138

22. Հովհաննիսյան Լ.Մ., Ագրովերամշակող արդյունաբերության պարենամթերքների արտադրության և իրացման բարելավման ուղիները ՀՀ-ում, էջ 265-271

23. Ղուբասարյան Մ.Ա., ՏՏ ոլորտի զարգացման հեռանկարները ինտեգրացիայի շրջանակներում, էջ 271-275

24. Մանգասարյան Ռ.Յ., ԼՂՀ տնտեսության զարգացման արդի մարտահրավերները, էջ 275-280

25. Մանուչարյան Մ.Գ., Պետական աջակցության անհրաժեշտությունը գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործում, էջ 280-285

26. Մարկոսյան Հ.Ա., Հոլանդական հիվանդությունը որպես Հայաստանում 2009թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի խորը ազդեցության հիմնական պատճառ, էջ 285-290

27. Մարկոսյան Հ.Ա., Մինասյան Ա.Գ., Հայաստանի և Իրանի տնտեսությունների համեմատական վերլուծությունը, էջ 290-296

28. Մխիթարյան Հ.Ս., Ներդրումային ռիսկերի դասակարգման հիմնական մոտեցումները, էջ 148-153

29. Մկրտչյան Ս.Ա., ՀՀ լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչը, էջ 302-307

30. Մկրտչյան Ա.Հ., Մանուչարյան Մ.Գ., Ագրովերամշակող արդյունաբերությունը որպես գյուղատնտեսության զարգացման շարժիչ ուժ, էջ 296-302
31. Շահինյան Տ.Վ., Գործարարությամբ զբաղվելու պայմանները ԵԱՏՄ երկրներում, էջ 307-311
32. Պողոսյան Շ.Պ., ՀՀ միգրացիոն գործընթացների ազդեցությունը դրամական փոխանցումների վրա, էջ 394-401
33. Պողոսյան Շ.Պ., Միգրացիոն շարժումը և դրա մեղմացման ուղիները ՀՀ-ում, էջ 401-406
34. Սարգսյան Լ.Ն., Հայ-իրանական փոխադարձ ներդրումային համագործակցության հիմքերը, էջ 326-332
35. Սարգսյան Կ.Ս., ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները և հիմնախնդիրները, էջ 164-171
36. Սարգսյան Կ.Ս., Հարկաբյուջետային քաղաքականության դերը և առանձնահատկությունները՝ ֆինանսատնտեսական ճգնաժամերի հաղթահարման համատեքստում, էջ 171-176
37. Սարինյան Ռ.Ն., Նուրիջանյան Ի.Կ., Մատթեոս Մամուրյանի «Տնտեսագիտական ուղղությունը», էջ 454-460
38. Վերդյան Ռ.Ա., Տնտեսության գործարքային ծախսերի գնահատման առանձնահատկությունները, էջ 332-339
39. Քերոբյան Ա.Ս., ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցությունը և զարգացման հեռանկարները «Արևելյան գործընկերության» շրջանակներում, էջ 339-347
40. Քարդումյան Ն.Գ., Գործարարությամբ զբաղվելը և հարկման արդյունավետությունը հարկային բեռի համատեքստում, էջ 193-199
41. Акобян И.Г., Таранян И.А., Проблемы взаимосвязи трудовой миграции с инвестициями в Армении, էջ 387-394
42. Бабаян Э.А., Проблемы совершенствования миграционной политики РА, էջ 347-352
43. Бабаян Э.А., О разновидностях и особенностях миграционных процессов, էջ 352-358
44. Габриелян Б.В., Совершенствование управления персоналом и оплата труда, էջ 432-438
45. Даниелян А.А., Пенсионное обеспечение в системе современных экономических отношений, էջ 81-87
46. Захарян А.Г., Проблемы миграции населения в Республике Армения, էջ 358-365
47. Захарян А.Г., Влияние миграционных процессов на развитие экономики Республики Армения, էջ 365-373
48. Затикян А.Т., Проблемы миграционных процессов в РА, էջ 373-380
49. Затикян А.Т., Трудовая миграция и ее роль в социально – экономическом развитии РА, էջ 380-387

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածուներ -1(23), Եր.: «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2016, 475 էջ

50.Ամիրխանյան Վ.Ա., Գիտելիքահենք տնտեսության հիմնական բաղադրիչները և ՀՀ-ում դրանց զարգացման ավանդույթներն ու հնարավորությունները, էջ 281-290

51.Ավագյան Հ., Բաբայան Է., Տարանյան Ի., Մետաղական օգտակար հանածոների շահագործման արդի վիճակը և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները, էջ 324-332

52.Ավագյան Հ., Բաբայան Է., Տարանյան Ի., Նորագույն տվյալներ Կամաքարի հանքաներկանման վերաբերյալ, էջ 332-340

53.Գաբրիելյան Բ., Գևորգյան Ա., Ձեռնարկատիրության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ ծառայությունների շուկայում, էջ 37-48

54.Զախարյան Ա., Հայաստանի Հանրապետությունում բաժնետիրական ընկերությունների գործունեության բարելավման հիմնախնդիրները, էջ 105-117

55.Հովհաննիսյան Լ., Հակոբյան Ե., Գյուղատնտեսության սուբսիդավորման և վարկավորման բարելավման շուկայական մեխանիզմների գնահատումը, էջ 348-354

56.Акопян И., Особенности формирования инвестиционно среды в РА, էջ 298-304

57.Габриелян Б., Аветисян А., Совершенствование кадровой политики организации в условиях кризиса, էջ 290-298

58.Оганян Т., О некоторых проблемах состояния сельского хозяйства РА, էջ 369-374

«Հայոց նորագույն պետականության քառորդ դարը»
գիտաժողովի զեկուցումների դրույթներ, 2016թ., հուլիսի 15,
Եր.: 2016, «Գիտություն» հրատ., 185 էջ

59.Բաղդասարյան Ք., Հարկային բարեփոխումներ, ստվերային տնտեսություն և տնտեսական զարգացում, էջ 103-107

60. Զախարյան Ա., Ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, էջ 92-98

61.Սարգսյան Կ., Կայուն տնտեսական աճի արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, էջ 98-103

«Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես

62.Այանյան Ա.Հ., Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների հաստատուն ծախսերի վերլուծությունը, #5-6 (189-190), 2016, Եր.: էջ 30-33:

63.Ավետյան Ա.Ս., ՀՀ համայնքային ֆինանսական կառավարման մեթոդաբանական սկզբունքներ, #5-6 (189-190), 2016, Եր.: էջ 57-59:

64.Թանգյան Ս.Գ., Վարկային հարաբերությունների օրենսդրական դաշտի կարգավորման հիմնահարցերը, #5-6 (189-190), 2016, Եր.: էջ 102-105:

65. Հարությունյան Հ.Հ., Տնտեսական գործունեության էկոլոգիական հետևանքների գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, #5-6 (189-190), 2016, Եր.: էջ 114-117

66. Սարինյան Ռ.Ն., Պետական պարտքի կառավարման հանգույցներում, #1-2 (185-186), 2016, Եր.: էջ 117-119

«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես 2016

67. Ամիրխանյան Վ.Ա., Նորարարական կլաստերների էությունը և ՀՀ տնտեսությունում դրանց գործարկման հնարավորությունները, 2016, #1, հունվար-մարտ, Եր.: էջ 342-351

68. Բոստանջյան Վ.Բ., Հարությունյան Տ.Վ., Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2016, #1, հունվար-մարտ, Եր.: էջ 322-332:

69. Մակարյան Ա.Ռ., Տնտեսության իրական հատվածի վրա արտաքին գործոնների ազդեցությունը և կարգավորման ուղիները, 2016, #1, հունվար-մարտ, Եր.: էջ 351-364:

70. Մակարյան Ա.Ռ., ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացումը տնտեսական զարգացման հիմքի բազմազանության ապահովման միջոցով, 2016, #1, հունվար-մարտ, Եր.: էջ 364-375:

71. Մանասերյան Թ.Ն., ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից Հայաստանի գործարար հանրության սպասումները, 2016, #1, հունվար-մարտ, Եր.: էջ 7-14:

Այլ հանդեսներում և ինտերնետային կայքերում

72. Bayadyan A.H., On new mechanism of financing for agriculture. Региональные проблемы преобразования экономики, №11 (73), 2016, . ISS N: 1812-7096

73. Harutyunyan V.L. Harutyunyan T.V., The conceptual approach towards tax administration issues. Региональные проблемы преобразования экономики, №8 (70), 2016, с.111-117. ISS N: 1812-7096

74. Harutyunyan V.L. Harutyunyan T.V., The role of the tax system and its administration in contributing to the economic growth in Armenia. Региональные проблемы преобразования экономики, №8 (70), 2016, с.117-123. ISS N: 1812-7096

75. Sargsyan, K.S., Evaluation of the effectiveness of state anti-crisis regulation in the Republic of Armenia. Региональные проблемы преобразования экономики, №1 (63), 2016, с.149-155. ISS N: 1812-7096

76. Бостанджян В.Б., Захарян А.Г., Проблемы защиты прав акционеров в Республике Армения. Вертикали истории: международный научный журнал, N 34, 2016г. / Под общ. ред. И. Квеселавы. – Тбилиси: Издательство грузинского технического университета, 2016. – 298 с., стр. 101-108

77. Захарян А.Г., Проблемы управления финансовыми рисками в акционерных обществах Республики Армения. Актуальные вопросы современной науки: сборник

научных трудов. Выпуск 50 / Под общ. ред. С.С. Чернова. – Новосибирск: Издательство ЦРНС, 2016. – 214 с., УДК 001(06), ББК 72я46, ISBN 978-5-00068-727-7, стр. 46-54

<http://zrns.ru/nauchnyy-trud/arkhiv-nauchnyy-trud/aktualnye-voprosy-sovremennoy-nauki/>

78. Лепехин В.А., Сафарян А.В., Тавадян А.А., Маркаров А.А., «Оценка интеграционных эффектов Армении» (в соавторстве), «Многомерный статистический анализ и эконометрика», Москва, 2016, 2с, НФСП infoleader.online

79. Лепехин В.А., Сафарян А.В., Тавадян А.А., Маркаров А.А., «Оценка воздействия интеграционных эффектов Армении на динамику ВВП» (в соавторстве), Российский экономический конгресс, Москва, 2016, 3с., НФСП infoleader.online

80. Тавадян А.А., Сафарян А.В., Тевилян А.Р., Тавадян А.А., Арутюнян Г.А., Саруханян С.Н., Демиденко М.В., Армения и Таможенный союз: оценка экономического эффекта интеграции – ЦИИ ЕАБР, Доклад № 20, 2013. Санкт-Петербург, – 48 с. ISBN 978-5-906157-10-2,

<http://id.lib.harvard.edu/aleph/013523677/catalog>

81. Тавадян А.А., Сафарян А.В., Демиденко М.В., Армения и Таможенный союз: Влияние экономической интеграции (13 декабря, 2013 г.). Доклад № 20, 2013, Евразийский банк развития Центр интеграционных исследований Москва: Наука, 2012, – 108с.

ISBN 9785020379572; ISBN 5020379573

Доклад на русском языке доступен на: <http://ssrn.com/abstract=2831924>,

В сайте “Social Science Research Network”

<http://id.lib.harvard.edu/aleph/013523677/catalog>

82. Саргсян К.С., Современные проблемы бюджетно-налоговой политики в РА. “Социально-экономические исследования, гуманитарные науки и юриспруденция: теория и практика” сб. материалов X международной научно-практической конференции, 14 октября, 1 ноября 2016 г. / под общей ред. С.С. Чернова. -Новосибирск, изд. ЦРНС, 2016, -192 с., стр. 32-38, ISBN 978-5-00068-680-5

83. Саргсян Л.Н., Губасарян М.А., Григорян Д.О., Сравнительный анализ инвестиционной среды Армении, Грузии и Ирана, Сборник “Велес”- материалы II Международной конференции «Развитие науки в век информационных технологий» (Киев, 30 нояб. 2016 г.), с.72-75, УДК 082 ББК 94.3 ISSN: 5836 - 4978

84. Саргсян Л.Н., Губасарян М.А., Григорян Д.О., Состояние армяно-иранских торговых отношений, приоритетные направления развития науки и образования. Изд-во ООО “Центр научного сотрудничества “Интерактив плюс” (Чебоксары), 2016, стр. 211-213, УДК 082 ББК 94.3 ISSN: 2411-9862

VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին

Տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթ. -անդամ, տ.գ.դ.Վ. Հարությունյան

Փոխտնօրեն՝ տ.գ.թ. Ա. Զատիկյան

Գիտական քարտուղար՝ տ.գ.թ. Ք.Բաղդասարյան

Էլեկտրոնային փոստը՝ E -mail: info@economics.sci.am.

Ինտերնետային կայքը՝ economics.sci.am.

VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ՝

ա) մինչև 35 տարեկան ղեկավար պաշտոն զբաղեցնում են 2 -ը կին

բ) հաշվետու տարում ընդունվել են 15 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 9 կին և ազատվել են 14-ը, որից 8-ը՝ կին

գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմում է 21, 35-ից 60 տարեկան՝ 15 և ավել տարիքի՝ 12:

VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական արեւնախոսությունների քանակը

Պաշտպանվել են դոկտորական՝ -, թեկնածուական ատենախոսություններ՝ 5

IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին՝

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում հաղթող են ճանաչվել ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտ. դոկ., պրոֆեսոր Վ.Լ.Հարությունյանը և տնտ. դոկ., պրոֆեսոր Ա.Հ.Բայադյանը:

X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ՝ նշելով համարեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համարեղ հրապարակումներ

Ինստիտուտը համագործակցում է Երևանի պետական (2 աշխատակից դասավանդում են), Հայաստանի պետական տնտեսագիտական (4), Հայաստանի պետական ճարտարագիտական (3), Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական (1), Հայաստանի Ազգային Ագրարային (3) համալսարանների հետ:

Ինստիտուտի 3 գիտաշխատողներ մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել՝

«Հայոց նորագույն պետականության քառորդ դարը» խորագրով գիտաժողովին, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը և ԵՊՀ-ը (հուլիսի 15-ին):

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Բայադյանը մասնակցել է միջազգային գիտաժողովին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում «Սննդամթերքների

անվտանգության և որակի ապահովման հիմնախնդիրները» խորագրով (հոկտեմբերի 20-21-ը): Հանդես է եկել հետևյալ թեմաներով՝

- «Եվրասիական տնտեսական միության անդամակցության հնարավոր ազդեցությունը ՀՀ-ի տնտեսական գործընթացների վրա»:

«ՀՀ-ում վարկային ներդրումների կարգավորման հիմնախնդիրները գյուղատնտեսության ոլորտում»:

Ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյանը ընդգրկվել է միջազգային «Տնտեսագիտական ինստիտուտի լրաբեր», Բելառուսի Ազգային ակադեմիայի ամսագրի գիտախմբագրական խորհրդի կազմում:

Համադրողողների թվաքանակը՝ 11

Համադրող հրապարակումներ՝

1. Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (գիտաժողովի զեկուցումների դրույթներ, 2016թ., հուլիսի 15) ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք, Երևանի պետական համալսարան, Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 185 էջ:

2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները (գիտական հոդվածների ժողովածու -1(23)), Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Եր. «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, 2016, 475 էջ:

XI. Տեղեկություններ համադրող միավորումների (ամբիոններ, լաբորատորիաներ և այլն) մասին -

**Ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
տնտ.դոկ., պրոֆեսոր՝**

Վ.Լ. Հարությունյան

**Գիտքարտուղար,
տնտ.գիտ.թեկնածու՝**

Ք.Յու.Բաղդասարյան

Աղյուսակ 1

Արտոնագրային ցուցանիշներ

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	1	2	3	4
	-	-	-	-

Աղյուսակ 2

2016 թ. թեմատիկայի ամփոփ արժեքներ

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային ֆինանսավորում	Թեմատիկ ֆինանսավորում	Տնտ. Պայմանագրեր
1	Տնտեսագիտության ինստիտուտ	-	8 / 140192,7	-	-

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	Գիտաժողով «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» (նվիրված Հայոց ցեղասպանության 100 -րդ տարելիցին՝ 1915 -2015թթ.)	ՀՀ, Կոտայքի մարզ, Արզական, ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը հուլիսի 14-16, 2016թ. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ.ՏԻ	60	-
2.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ -տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ -ում» խորագրով	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ հոկտեմբերի 10-11, 2016թ.	30	

Աղյուսակ 4

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ, կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
	Տնտեսագիտության ինստիտուտ	ՌԴ	2	-	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն կազմակերպությունում

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6

Կազմակերպության միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քց.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2016 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	

Կազմակերպության 2016 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե առ 01.10.2016թ.	Դրամաշնորհներ		
				արտարժույթ (\$, €, քց.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	Տնտեսագիտության ինստիտուտ	161119,3	3205,1	-	-	-

ԳԱԱ գիտաշխատողների 2016 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Տնտեսագիտության ինստիտուտ	7	-	-	-	71	3	-	-

Ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2017 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5	6
	Տնտեսագիտության ինստիտուտ	13	7	3	3

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտքարտուղարը (գիտ.աստիճան, անուն, ազգանուն)	2012 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2017 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	Տնտեսագիտության ինստիտուտ	60	48	1	1	8	23

I. The most important results

Within the scope of the research project entitled “***The Issues of Assessment of the Financial and Economic Activities of Economic Agents in the Republic of Armenia and the Ways of thereof Improvement***” (Team Leader: Ashot Bayadyan, Doctor of Sciences (Economics)) the followings have been proposed:

- The promotion of investment projects in various sectors, reduction of budgetary expenditures, improvement of tax administration, the enlargement of programs aimed at loaning the SMEs ensuring the competition,
- To ensure the implementation of the comprehensive quantitative methodology envisaged for the assessment of the competitiveness of the companies have been proposed. It is a necessity for all the enterprises.

Within the scope of the research project entitled “The Issues of Integration Processes of the Republic of Armenia” (Team Leader: Ashot Tavadyan, Doctor of Sciences (Economics)) the followings have been proposed:

- It is necessary to elaborate a new model of economic development of the Republic of Armenia which would take into account both internal and external challenges that the Armenian economy is facing and would predict the expected outcomes;
- It is deduced that the recommendations regarding the effective usage of the opportunities of the EAEU integration should also take into consideration the issues of economic security of Armenia;
- Armenia has a considerable potential to develop fruitful and productive trade and economic relations with both neighbor countries such as Iran and Georgia as well as with some of the EU member countries.

2) Within the scope of the research project entitled “***The Issues of Fiscal Policy Improvement in the Republic of Armenia***” (Team Leader: Karen Sargsyan, Candidate of Sciences (Economics)) the followings have been proposed:

- The reduction of tax burden and the enlargement of the tax base are of a primary importance for the improvement of the business climate, for ensuring economic growth and for the release of social tension. Indeed, such policies would enable to make the tax system more effective. And in order to improve the tax system the following measures have been proposed:
 - The application of the differentiated rates of VAT, particularly the introduction of reduced VAT rate with respect to the goods and services of vital importance;
 - The application of accelerated depreciation with respect to the corporate tax;
 - The reduction of the taxed profit proportionally to the amount envisaged for financing the new investments;
 - The revision of maximum norms deductible expenses out of the profit of the company;
 - The reduction of the tax burden for the natural persons.

IV. The findings of the applied research

Within the scope of the research project entiteled “***The Issues of Assessment of the Financial and Economic Activities of Economic Agents in the Republic of Armenia and the Ways of thereof Improvement***” (Team Leader: Ashot Bayadyan, Doctor of Sciences (Economics)) the followings have been proposed:

- On the example of “Yerevan Brandy Factory” CJSC the expediency of the newly signed and active contracts between the producers and food-processing companies have been studied and analyzed. The Government of the Republic of Armenia is proposed to subsidize the producers in accordance with the difference between the market price and the existenet price floor;

- To reduce the risks of production it is proposed to establish new insurance systems on the principle of co-financing. It would be further supported with the new system of intercommunity unifications in the future.

Within the scope of the research project entiteled “The Issues of Integration Processes of the Republic of Armenia” (Team Leader: Ashot Tavadyan, Doctor of Sciences (Economics)) the followings have been proposed:

- To assess the integration effects of the Republic of Armenia, it is proposed to construct a multivariate regression model. In particular, it is studied the impact of the variables causing the integration processes, on the GDP;

- It is proposed to significantly reduce the existing difference between the refinancing rate and the infliation (at least 2-3 p.p.);

- It is substantiated that in the in line with the trends of development of the current global energy market, countries like Armenia that are heavily dependent upon energy import, need to gradually move towards the usage of the alternative (renewable) energy sources.

I. Важнейшие результаты деятельности института

В рамках темы «Проблемы оценки деятельности хозяйствующих субъектов и пути их решения в РА» (рук.д.э.н. А.Баядян) предложено:

- с целью обеспечения конкуренции осуществить стимулирование инвестиционных программ в разных отраслях, сокращение всех бюджетных расходов, реформирование налогового администрирования, расширение программ кредитования малых и средних предприятий;

- обеспечить применение единой методики всесторонней количественной оценки конкурентоспособности, в которой нуждаются все отечественные организации.

В рамках темы «Проблемы процессов интеграции Республики Армения»(рук. д. э.н. А.Тавадян) дано обоснование

- необходимости формирования новой модели развития экономики РА, учитывающей внутренние и внешние вызовы экономики РА с предвидением ожидаемых результатов;

- важности учета задачи экономической безопасности страны с точки зрения требования по эффективному использованию интеграционного потенциала ЕАЭС для Армении

- наличия значительного потенциала у Армении для развития эффективных торгово-экономических отношений как с соседними странами - Грузией и Ираном, так и с рядом государств-членов ЕС.

В рамках темы «Современные проблемы улучшения налогово-бюджетной политики в РА» (рук.к.э.н. К.Саргсян) отмечается

- с точки зрения активизации бизнес - среды, стимулирования экономического роста и смягчения социальной напряженности в РА наиболее важное значение имеет сокращение налоговой нагрузки и одновременно расширение налоговой базы, что позволит сделать налоговую систему Армении более эффективной.

В качестве направлений реформирования налоговой системы предложено:

- введение дифференцированных ставок НДС, в частности, применение установленной пониженной ставки НДС для жизненно важных товаров и услуг;

- использование ускоренной амортизации в части налога на прибыль;

- уменьшение облагаемой налогом прибыли организации на сумму, которая будет направлена на финансирование инвестиций;

- пересмотр предельных норм вычитаемых расходов из прибыли организации;

- сокращение налоговой нагрузки на физических лиц.

II. Основные результаты исследований по базовому финансированию

1) В рамках темы «Проблемы оценки деятельности хозяйствующих субъектов и пути их решения в РА» (рук.д.э.н. А.Баядян) исследованы:

финансово-экономическая деятельность хозяйствующих субъектов, показатели их финансовых результатов и рентабельности, оценка финансовой устойчивости, возможные пути преодоления последствий финансово-экономического кризиса, развитие договорных отношений между перерабатывающими предприятиями и производителями, улучшение доступности финансовых ресурсов, анализ рисков производственных предприятий, а также пути и способы их снижения.

В результате проведенного анализа предложено:

- увеличить размер чистой выручки от реализации в составе валового внутреннего продукта, что способствует расширению объемов более прибыльных видов продукции;
- одна из важнейших задач агроперерабатывающей сферы - привлечение доступных кредитов.

2) В рамках темы «Современные проблемы улучшения налогового-бюджетной политики в РА» (рук.к.э.н. К.Саргсян)

●проведено исследование и дан анализ теоретико-методических основ налогового-бюджетной политики;

●проанализированы особенности налогового-бюджетной политики, в результате чего и были выявлены существующие в сфере проблемы;

●исследован зарубежный опыт в сфере налогового-бюджетной политики и проведены сравнительные анализы;

●предложены специфические подходы к повышению эффективности налогового-бюджетной политики.

3 В рамках темы « Проблемы процессов интеграции Республики Армения» (рук.д. э.н. А.Тавадян)

●выявлены внешние и внутренние вызовы экономики РА. В качестве внешних вызовов указаны нестабильная ситуация в регионе, падение покупательной способности в России, несогласованность макроэкономической политики стран ЕАЭС, а также падение цен на цветные металлы на мировом рынке, внутренние же вызовы обусловлены недостаточной согласованностью денежно-кредитной и налогового-бюджетной политики и высоким уровнем коррупции.

С целью выявления путей эффективного использования интеграционного потенциала ЕАЭС исследованы барьеры реализации этого потенциала и перспективы по тем направлениям развития интеграционного сотрудничества, которые предложены со стороны Высшего Евразийского экономического совета.

Исследованы альтернативные направления экономической интеграции Армении, в частности, перспективы развития торгово-экономического сотрудничества Армения – Иран и РА-ЕС. Проведен анализ динамики и структуры армяно-иранских инвестиций.

4)В рамках темы «Демографические и материальные потери армянского народа во время геноцида и проблемы их возмещения» (рук.член-корр. НАН РА, д.э.н. В.Арутюнян) представлены характеристика собственности армян, проживающих в провинциях Бурсе и Адане, а также наличие недвижимого имущества, находящегося в распоряжении церкви до 1915 года, а также потери, понесенные в годы Армянского геноцида.

5)В рамках темы «Контуры современного течения армянской экономической мысли:научный вектор» (рук.д.э.н.Р.Саринян) результаты исследований реализованы в следующих публикациях:

Монографии

- В.Арутюнян, Р.Саринян, «Институт экономики за 10 лет: 2006-2016 г гг.» (контур исследовательских результатов), изд-во «Гитутюн», 2016, 223 с.

В работе представлен вектор десятилетней (2006-2016 гг.) научно- исследовательской деятельности Института экономики.На основе определенной тематической систематизации материала (экономические кризисы, налоговая экономика, наука и экономический рост, международная экономика, управленческая мысль, реальный сектор экономики, история экономической мысли) были проведены анализы относительно их воззрений и прикладных аспектов.

- Готовится к публикации монография «Аветик Арасханян и его «Мурч»» (Р.Саринян, А.Тадевосян).

Возобновились работы над доработанным переизданием монографии «Армянские экономисты», сбор новых материалов относительно отдельных периодов истории армянской экономической мысли , а также готовится к публикации Часть 1 книги под заголовком «Два века армянской экономической мысли» (научно-биографическая энциклопедия).

III. Основные результаты исследований по тематическому финансированию

Научных исследований по тематическому финансированию не имели.

IV. Результаты прикладных исследований

В рамках темы «Проблемы оценки деятельности хозяйствующих субъектов и пути их решения в РА» (рук.д.э.н. А.Баядян)

- На примере ЗАО «Ереванский коньячный завод » исследована, проанализирована и обоснована целесообразность заключенных и действующих договоров между субъектами, производящими сельскохозяйственную продукцию, и перерабатывающими производственными предприятиями; предложено осуществить субсидирование производителей со стороны Правительства РА в размере существующей разницы между рыночной ценой и установленной минимальной ценой;

- Для снижения степени производственных рисков предложено осуществить по принципу софинансирования скорейшее формирование новой системы страхования, которой в дальнейшем содействует создание новой системы межобщинных объединений.

В рамках темы « Проблемы процессов интеграции Республики Армения» (рук.

д. э.н. А.Тавадян)

- Для оценки интеграционных эффектов РА предложено создать многомерную регрессионную модель. В этом контексте, в частности, исследовано влияние обуславливающих интеграционные процессы переменных на ВВП.

- Предложено существенно снизить разницу между ставкой рефинансирования и инфляцией до более чем 2-3 процентных пункта.

- Обосновано, что в соответствии с современными тенденциями развития глобального энергетического рынка, Армения как страна, которая во многом зависит от импорта энергоносителей, должна осуществить постепенный переход к использованию альтернативных (возобновляемых) источников энергии.

II.